# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№4092-Ա «07» հոկտեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-Ի Հ.3910-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 37-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 53-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով «ԱՆԹԵՂ» ՍՊԸ-ի լ/ա Էդուարդ Մանուկյանի 01.10.2025թ. հ.Դ-108353-25 դիմումը.

1.Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքերին տրամադրել հասցեներ՝ համաձայն հավելվածի:

2.Երևանի քաղաքապետի 2025թ. սեպտեմբերի 24-ի «Երևանի քաղաքապետի 2025 թվականի հուլիսի 29-ի հ.3031-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու և անշարժ գույքերին հասցեներ տրամադրելու մասին» հ.3910-Ա որոշման հավելվածի 2-րդ կետի 5-րդ սյունակում՝ «3834.52քմ» բառերը փոխարինել «3802.36քմ», իսկ 3-րդ կետի 5-րդ սյունակում «6275.79քմ» բառերը՝ «6185.10քմ» բառերով:

3.Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին սույն որոշման օրինակները 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել վարչական շրջանների ղեկավարներին, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժինների պետերին և դիմողներին:

4.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Հավելված
Երևանի քաղաքապետի
07.10.2025թ.
հ. 4092-Ա որոշման

# ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

| Հ.Հ. | Դիմողը | Անշարժ գույքի գտնվելու վայրը | Անշարժ գույքի տեսակը | Տրամադրվող հասցեն | Հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը | Փոստային դասիչը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Էդգար և Սայաթ Ֆենդյաններ | Նուբարաշեն վարչական շրջան | հողամաս | Նուբարաշեն վարչական շրջանում գտնվող 500.0քմ մակերեսով հողամասին /հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի 26.04.2025թ. հ.1631 և 28.04.2025թ. հ.1630 վկայագրեր/ տրամադրել հասցե՝ Նուբարաշեն «Մասիս-Ա» այգեգործական տարածք, հ.362 | 01103MEUQXRW | |
| 2 | Արթուր Ենգիբարյան /լիազորված անձ/ Վահե Ենգիբարյան | Գոգոլի փողոց, հ.26/27, Գոգոլի փողոց, նրբանցք, հ.26/28 և հ.26/29 | հողամաս | Վահե Ենգիբարյանին սեփականության իրավունքով պատկանող, Գոգոլի փողոցի հ.26/27, Գոգոլի փողոցի նրբանցքի հ.26/28 և հ.26/29 հասցեներում գտնվող հողամասերին /վկ. հ.07052020-01-0019, վկ.հ.09112021-01-0019 և վկ. հ.03072025-01-0045/ ըստ միավորման հատակագծի տրամադրել մեկ միասնական հասցե՝ Ն. Գոգոլի փողոց, հ.26/27 | 01123YRBZXGD | |
| 3 | Էդգար Գալստյան | Մոլդովական փողոց, հ.24/12 և Բագրևանդի փողոց, հ.2/15 | հողամաս | Էդգար Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող, Մոլդովական փողոցի հ.24/12 և Բագրևանդի փողոցի հ.2/15 հասցեներում գտնվող բնակելի տների զբաղեցրած հողամասերին /վկ. հ.27082021-01-0209 և հ.28122021-01-0311/ ըստ միավորման հատակագծի տրամադրել մեկ միասնական հասցե՝ Բագրևանդի փողոց, հ.2/15 | 01083XDVQUQJ | |
| 4 | Համմիկ Գալստյան /լիազորված անձ/ Մարիամ Խաչատրյան | Արարատյան փողոց, հ.62/2 շենք, հ.610ա | բնակարան | Անշարժ գույքի նվիրատվության 22.09.2025թ. հ.3291 պայմանագրով, Մարիամ Խաչատրյանին նվիրած՝ Արարատյան փողոցի հ.62/2 շենքի հ.610ա հասցեում գտնվող բնակարանին տրամադրել հասցե՝ Արարատյան փողոց, հ.62/2 շենք, բն.610/1 | 01113MLHNPVK | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5 | Հերմինե Դոլուխանյան /լիազորված անձ/ Վարուժան Հարությունյան | Մուշ թաղամաս, հ.197 և հ.198 | հողամաս | Վարուժան Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող, Մուշ թաղամասի հ.197 և հ.198 հասցեներում գտնվող հողամասերին /վկ. հ.18092025-01-0374 և հ.18092025-01-0324/ ըստ միավորման հատակագծի տրամադրել մեկ միասնական հասցե՝ «Մուշ» թաղամաս, հ.197-198 | 01073JDLG7VN | |
| 6 | Օգսեն, Սուսաննա, Հռիփսիմե, Անահիտ Հենրիկ Բաբայաններ և Լուսինե Քանքանյան | Նոր-Նորքի 7-րդ միկրոշրջան,հ.32 շենք, հ.10 | բնակարան | Օգսեն, Սուսաննա, Հռիփսիմե, Անահիտ Հենրիկ Բաբայաններին և Լուսինե Քանքանյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող, Նոր-Նորքի 7-րդ միկրոշրջանի հ.32 շենքի հ.10 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ.23012024-01-0205, ընդհ. բաժն. 1.6քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 38.5քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Ջ. Կարախանյան փողոց, հ.32 շենք, բն.10/1 | 01083CTJHCRU | |
| 7 | Գևորգ Հակոբյան | Եղ. Թադևոսյան փողոց, հ.10 շենք, հ.18 | բնակարան | Գևորգ Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող,  Եղ. Թադևոսյան փողոցի հ.10 շենքի հ.18 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ.12092025-01-0475, ընդհ. բաժն. 3.4քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 29.8քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Եղ. Թադևոսյան փողոց, հ.10 շենք, բն.18/1 | 01113LXPJ3K4 | |

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝** CoSign **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**